



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ Երևան 2015

Դասախոսների որակավորման բարձրացման միջոցառումների որակն ու արդյունավետությունը (ԵՊՀ օրինակով)

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում տարբեր ծրագրերի շրջանակներում գործարկվել են կրթության որակի ապահովման մեխանիզմներ: Դրանց մի մասը ներդրվել է միայն միջազգային դոնորների սպասումները բավարարելու համար՝ առանց հաշվի առնելու տեղական կարիքները, առանձնահատկություններն ու նախադրյալները: Հաճախ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմը փորձում է խուսափել այդ ծրագրերի մասնակցությունից՝ ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսանալով, նորի նկատմամբ մերժողական դիրքորոշում ունենալու և բազմաթիվ այլ պատճառներով:

2011թ. սեպտեմբերից Երևանի պետական համալսարանում գործարկվեց պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացմանն ուղղված մի մեխանիզմ¹, որի արդյունավետության անկախ և արտաքին (ոչ ներբուհական) գնահատում դեռևս չի կատարվել:

Որակավորման բարձրացումը պարտադիր է հիմնական դասախոսական կազմի (ԵՊՀ շուրջ 1000 դասախոսների) համար: Որակավորման բարձրացման հնգամյա շրջափուլն ավարտվելու է 2016թ. հունիսին:

Ծրագիրն ունի 2 կառուցամաս՝ կրթական և հետազոտական-մեթոդական: Կրթական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը 27 կրեդիտ է (որից 10 կրեդիտը կազմում են պարտադիր դասընթացները): Կառուցամասը ներառում է հետևյալ 4 բաղադրիչները՝ ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական, մասնագիտական պատրաստության և որակավորման բարձրացման այլ ձևեր: Ծրագրի հետազոտական-մեթոդական կառուցամասի առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել մինչև 20 կրեդիտ

(որից 3-ը՝ պարտադիր): Այն ներառում է հետևյալ 3 բաղադրիչները՝ հրատարակումներ, զեկուցում համաժողովում (աշխատաժողովում, գիտաժողովում) և ստենախոսության պաշտպանություն:

Որակավորման բարձրացումը հավաստելու համար ունկնդիրը 5 տարում պետք է հավաքի առնվազն 30 կրեդիտ, որից 13-ը՝ ծրագրի պարտադիր բաղադրիչներից, 17-ը՝ կամընտրական: Հակառակ պարագայում, տվյալ դասախոսն ամփոփիչ ատեստավորում չի անցնի:

Թե՛ կրեդիտների քանակը, թե՛ պարտադիր բնույթ ունեցող առարկաներն ու դրանց բովանդակությունը բազմաթիվ խնդիրներ և դժգոհություններ են առաջ բերել ԵՊՀ դասախոսների շրջանում: Բաց են մնացել ամենակարևոր հարցերը. որքանո՞վ են այս միջոցառումները համապատասխանում դասախոսների կարիքներին (միջնորդավորված կերպով՝ նաև ուսանողների կարիքներին) և որքանո՞վ են դրանք արդյունավետ/որակյալ:

Այս ուսումնասիրության նախաձեռնողները, հանդիսանալով ԵՊՀ դասախոսներ, իրենց դասավանդման ամենօրյա պրակտիկայի և մասնագիտական զարգացման մեջ դժվարանում են նույնացնել որակի ապահովման նկարագրված միջոցառումների իրական ազդեցությունը: Շոշափելի և հստակ չէ մասնագիտական առաջխաղացման և տվյալ միջոցառման գործողությունների միջև կապը:

Այս ուսումնասիրության **նպատակն է՝** գնահատել ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի որակն ու արդյունավետությունը:

- Կատարված է նկարագրված մեխանիզմի արդյունավետության վերլուծությունը՝ մի շարք չափանիշների համաձայն (համապատասխանություն կարիքներին և հասցեականություն, դասավանդման մեթոդների նորարարություն, բովանդակության որակ և ակտուալություն, ստացված գիտելիքների կիրառելիություն, և այլն):

¹ Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ. նոյեմբերի 18-ի նիստում, <http://goo.gl/swiuG2>

- Դասախոսների որակավորման բարձրացումը դիտարկված է կրթության որակի ապահովման այլ մեխանիզմների ու մոտեցումների լայն համատեքստում:
- Մշակված են ինչպես նշված մեխանիզմի արդյունավետության բարձրացմանն ուղղված, այնպես էլ դասախոսական կազմի որակավորման և կրթության որակի ապահովման առաջարկություններ:

Ուսումնասիրության **գործնական նպատակը՝** առկա հիմնախնդիրների համակարգված ներկայացումն է և դրանց լուծումների մշակումը: Հետազոտական թիմն ընդունում է այն մոտեցումը, որ միայն ծրագրի անմիջական շահառուներին (դասախոսներին) ներառող մասնակցային գործընթացը կարող է հանգեցնել ծրագրի էական բարելավման:

Հետազոտությունն իրականացվել է ՀՔԻ փորձագետներ Արևիկ Անափոսյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և Ավետիք Մեջլումյանի կողմից՝ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակությամբ:

Հետազոտական թիմի անդամները ԵՊՀ դասախոսներ են և հանրային քաղաքականության տարբեր բնագավառներում կիրառական հետազոտությունների հարուստ փորձառություն ունեն:

ՀՔԻ ուսումնասիրություններին կարելի է ծանոթանալ կազմակերպության կայքում՝ www.ipp.am և հետևելով ֆեյսբուքյան էջի (Institute of Public Policy) թարմացումներին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերախնամատվորել դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի փիլիսոփայությունը:

Պետք է գործնականում իրացվի այն սկզբունքը, որ ծրագիրը ոչ թե դասախոսների ստուգման ու վերահսկողության, այլ՝ խորհրդատվության ու կարողությունների զարգացման նպատակ ունի: Հարկավոր է ուշադրություն դարձնել միջավայրատեղծ գործողություններին: Պետք է այնպիսի ամբիոնային միջավայր ձևավորել, որտեղ ոչ թե արտաքին ճնշող մեխանիզմները, այլ մոտիվացիոն այլ խթանները կնպաստեն դասախոսի ինքնազարգացմանը:

2. ԵՊՀ դասախոսների որակավորման ծրագրի վերանայման և 2016-2020թթ. ծրագրի մշակման գործընթացներում ապահովելով անմիջական (դասախոսներ) և անուղղակի (ուսանողներ) շահառուների ակտիվ մասնակցությունը:

Սա հնարավոր կլինի իրականացնել, եթե գործընթացն ունենա մշակման ներքին-վերն ուղղություն, այսինքն՝ զարգացման պլանները կազմվեն ամբիոններում և ֆակուլտետներում, այնուհետև՝ ընդգրկվեն համահամալսարանական ծրագրում:

3. Վերանայել ծրագրի պարտադիր բնույթը: Դրա անհնարինության պայմաններում, նվազեցնել ծրագրի՝ պարտադիր բնույթ ունեցող բաղադրիչների թիվը և ավելացնել կամընտրական բաղադրիչների ծավալը:

Ինչպես ցույց տվեց միջազգային փորձի ուսումնասիրությունը, առավել արդյունավետ են այն ծրագրերը, որոնք պարտադիր բնույթ չունեն, և առավելապես միտված են առողջ և զարգացող ակադեմիական միջավայրի ձևավորմանը: Ուստի, ցանկալի կլինեն խուսափել պարտադրանքից և նպաստել փոխվստահության ու առողջ մրցակցային ակադեմիական միջավայրի ձևավորմանը: Միաժամանակ, հարկավոր է մշակել խրախուսանքի մեխանիզմներ (օրինակ՝ աշխատավարձի հավելում, դասախոսական տարակարգերի շնորհման միավորների հավելում)՝ կամընտրական/ոչ-պարտադիր բաղադրիչներին մասնակցությունը խթանելու համար:

4. Բարձրացնել ծրագրի մասին իրազեկվածության մակարդակը ֆակուլտետներում և ամբիոններում ոչ ֆորմալ, բայց պարբերական քննարկումների միջոցով:

5. Ծրագրի շրջանակներում դասավանդող դասախոսների ընտրության չափանիշների սահմանում և դրանց թափանցիկության ապահովում:

Թեև որակավորման բարձրացման ծրագրի դասընթացները միտված են դասավանդման ժամանակակից մոտեցումների ու մեթոդների ուսուցմանը, սակայն կիրառվող մեթոդների զգալի մասը դժվար է ժամանակակից համարել: Բացակայում են դասավանդման նորարարական մոտեցումներն ու անտեսված են ուսանողակենտրոն ուսուցման (դասախոսներն այս ծրագրի շրջանակում «ուսանողի» կարգավիճակ ունեն) սկզբունքները: Հարկավոր է ապահովել դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառությունը: Իրենք՝ դասավանդողները պետք է լինեն ուսուցման նորարարական մշակույթի կրողներ:

6. Մշակել ունկնդիրների խմբերի ձևավորման սկզբունքներ:

Հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել ունկնդիրների խմբերի ձևավորմանը, քանի որ դասավանդողի և ունկնդիրների տարիքային, փորձառության և այլ տարբերությունները լարվածության ու կոնֆլիկտների են հանգեցնում:

7. Վերամշակել պարտադիր բնույթ ունեցող դասընթացների խումբը և դասախոսներին ներկայացվող հետազոտական-մեթոդական կառուցամասի պահանջները:

Հարկավոր է ուսումնասիրել ձեռք բերված գիտելիքների և կարողությունների գործադրման՝ ԵՊՀ կողմից ապահովվող պայմաններն ու ենթակառուցվածքները (լսարանների տեխնիկական հագեցվածություն, կանոնակարգերով դրված սահմանափակումներ, դասախոսի ծանրաբեռնվածություն): Պետք է ամրագրել այն սկզբունքը, որ այդ պայմանների ու

ենթակառուցվածքների բացակայության կամ ոչ բավարար ծավալի դեպքում նպատակահարմար չէ պարտադիր բնույթ ունեցող դասընթացների կազմակերպումը:

Պետք է հստակեցնել հրատարակումներին ներկայացվող բովանդակային պահանջները: Օրինակ, ինչպիսի թեմատիկ ուղղվածություն և առնչություն պետք է ունենան դրանք դասախոսի կրթական գործունեության հետ, արդյո՞ք կարևոր է այդ գիտական արդյունքների օգտագործումը դասավանդման գործընթացում: Կամ՝ որո՞նք են համաժողովների զեկուցումներին ներկայացվող պահանջները, արդյո՞ք զեկուցման տպագիր տեքստի առկայությունը բավարար պայման է հանդիսանում:

8. Գործարկել ծրագրի կառավարման էլեկտրոնային համակարգ:

Ծրագրի կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը կապահովի ծրագրի մասին ամբողջական տեղեկատվության հասանելիություն՝ սկսած դասընթացների առարկայական ծրագրերից ու ժամանակացույցից, մինչև յուրաքանչյուր դասախոսի անհատական ուսուցման պլանն ու հավաքած կրեդիտների քանակը: Այս համակարգին մուտք ունեցող դասախոսներն իրենց մասնակցության պլանավորման ավելի ճկուն հնարավորություն կստանան:

Էլեկտրոնային համակարգի միջոցով դասախոսները պետք է հնարավորություն ունենան վերբեռնելու իրենցից պահանջվող տարբեր փաստաթղթեր՝ հոդվածներ, վկայագրեր, և այլն: Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակումն ու անմիջական, ֆիզիկական ներկայության նվազեցումը թույլ կտա խնայել թե՛ դասախոսների, թե՛ որակի ապահովման պատասխանատուների ժամանակը:

9. Որակավորման բարձրացման գործընթացում տեղայնացնել այլ բուհերի (հայաստանյան և արտերկրի) փորձը

Ցանկալի կլինի արտերկրից դասախոսների ներգրավումը որակավորման բարձրացման գործընթացում: Սա կնպաստի համալսարանական այլ մշակույթների տարրերի ներմուծմանը, փորձի փոխանակմանն ու հարստացմանը: Կարևոր է որակի ապահովման հայաստանյան այլ բուհերի փորձի ճանաչումը: Քանակական հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվողները տեղյակ չեն այլ բուհերի փորձին: Տարբեր բուհերի որակի ապահովման դրական փորձը ներփակ բնույթ ունի: Մինչդեռ բաց հաղորդակցությունը կնպաստի փոխադարձ զարգացմանը:

10. Մինչև 2016-2020թթ. ծրագրի մշակումն ու հաստատումը, իրականացնել ԵՊՀ դասախոսների կարիքների գնահատում:

Դասախոսների որակավորման նոր ծրագրի կառուցվածքն ու կառուցամասերը, կարգն ու սկզբունքները պետք է հիմնվեն ինչպես ԵՊՀ

ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ առանձին ֆակուլտետների ու դասախոսների անհատական կարիքների գնահատման վրա: Հարկավոր է ապահովել կարիքների բազմակողմ գնահատումը. ինքնագնահատում, գործընկերների կողմից և ֆակուլտետի/ամբիոնի ղեկավարության կողմից գնահատում: Կարիքների գնահատումը կլինայի և՛ դասավանդողների, և՛ մասնակիցների ժամանակային ու այլ ռեսուրսները, ուսուցումն իսկապես հասցեական ու թիրախային կդառնա:

11. Մինչև 2016-2020թթ. ծրագրի մշակումն ու հաստատումը, իրականացնել ԵՊՀ շրջանավարտների աշխատաշուկայի և ուսանողների կարիքների գնահատում:

Կարևոր է յուրաքանչյուր մասնագիտության գծով աշխատաշուկայի և ուսանողների կարիքների գնահատումը: Այդ կարիքները պետք է ուղղակի և անուղղակի արտացոլում գտնեն դասախոսների որակավորման բարձրացման գործընթացում:

12. Որակավորման ծրագրի առանձին բաղադրիչ-դասընթացների բովանդակության մշակումը վստահել ֆակուլտետներին և ամբիոններին:

13. Որակավորման միջոցառումների (դասընթացներ, վերապատրաստումներ, այլ) զգալի մասը ցանկալի է տեղափոխել ֆակուլտետային մակարդակ, որտեղ դասընթացի մշակումը և ուսուցումն առավել ճկուն եղանակներով կկազմակերպվի:

Ֆակուլտետներում ավելի արդյունավետ կլինի կարիքների ներքին գնահատումը, դրանց հիման վրա ճկուն բովանդակությամբ դասընթացների մշակումը և այլ կազմակերպական հարցերի լուծումը:

14. Նպաստել գործընկեր-դասախոսների կողմից ոչ ֆորմալ դասընթացների անցկացման մշակույթի ձևավորմանը:

Դասախոսների կրթության լավագույն հնարավորություններից մեկը հորիզոնական կապերի միջոցով ուսուցումն է գործընկեր-դասախոսների կողմից: Կրթության այս եղանակը կարող է փոխլրացնել դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կողմից առաջարկվող դասընթացները, որոշ դեպքերում՝ փոխարինել դրանց: Ֆակուլտետների և ամբիոնների մակարդակում հնարավոր կլինի իրացնել հորիզոնական ուսուցման (հավասարը՝ հավասարին, գործընկերների միջև) ներուժը: Գործընկերների հետ իրենց գիտելիքներով կհսվելու պարտականությունը կխթանի դասախոսների ինքնազարգացումը, հաղորդակցության և փոխօգնության բաց մշակույթ կձևավորի: Այդ կերպ կապահովվի նաև դասախոսների հաշվետվողականությունը՝ ակադեմիական և մասնագիտական հանրության առջև:

Ապակենտրոնացումը թույլ կտա ավելացնել մասնագիտական դասընթացների ծավալը և դասընթացները մշակելիս հաշվի առնել յուրաքանչյուր գիտակարգի/բնագավառի առանձնահատկությունները: Խոսքի մշակույթ կամ հոետորական արվեստ դասընթացներում ուշադրություն կդարձվի, օրինակ,

տվյալ մասնագիտության հայերեն եզրաբանության խնդիրներին: Դասավանդման ժամանակակից մեթոդներին նվիրված դասընթացներում, օրինակ, ուշադրություն կդարձվի այն մեթոդներին, որոնք առավել կիրառելի ու համարժեք են հենց այդ մասնագիտության դասավանդմանը: Բնականաբար, այս մակարդակում միջոցառումների պատշաճ իրագործման նկատմամբ հարկավոր կլինի ուժեղացնել վերահսկողությունը, քանի որ ապակենտրոնացումը ծրագրի կառավարման նոր ռիսկեր է առաջացնելու:

15. Ձևավորել դասախոսի գործունեության արդյունքների (մասնագիտական ձեռքբերումների) որակական գնահատման համակարգ: Ներկայիս գնահատումն առավելապես քանակական և մեխանիկական բնույթ ունի:

Հարկավոր է տարբերակված մոտեցում կիրառել տարբեր գիտակարգերի դասախոսների արդյունքները գնահատելու համար: Պետք է հաշվի առնել տվյալ մասնագիտության շրջանակներում, օրինակ, գիտական հոդված գրելու կամ հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ աշխատաժամանակն ու պահանջվող ռեսուրսները:

16. Մշակել դասընթացի մասնակիցների գիտելիքների և հմտությունների գնահատման հստակ ու կանխատեսելի կանոնակարգ:

Հարկավոր է խուսափել գնահատման՝ դասավանդողի իրավիճակային լուծումներից, մի քանի հոգու պատասխանների հիման վրա ամբողջ խմբին ստուգարք նշանակելուց և սուբյեկտիվ վերաբերմունքի այլ դրսևորումներից:

17. Մշակել դասընթացի գնահատման կարգ և համապատասխան գործիքներ:

Շատ կարևոր է դասընթացի ավարտից հետո ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների հետագա կիրառության շարունակական գնահատումը: Դասընթացների ավարտին մասնակիցները պետք է հնարավորություն ունենան հարցաթերթերի լրացման կամ այլ միջոցներով համակողմանիորեն գնահատելու իրենց մատուցված նյութի որակը, դրա համապատասխանությունը իրենց կարիքներին, դասավանդման մեթոդները և բազմաթիվ այլ խնդիրներ:

Հետադարձ կապի ապահովումը կարևոր է ինչպես ծրագրի ազդեցությունը հասկանալու, այնպես էլ՝ դասախոսներին շարունակական խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու համար: Մյուս կողմից, դասախոսներից ստացված տեղեկատվությունը թույլ կտա վերանայել և բարելավել դասընթացները:

18. Նպաստել ԵՊՀ ակադեմիական ինքնավարության հաստատմանը՝ գերծ որևէ քաղաքական կամ կուսակցական ազդեցությունից:

19. ԵՊՀ-ն քայլ առ քայլ մոտեցնել որակի արտաքին գնահատման համակարգի՝ միջազգայնորեն ընդունված պահանջներին:

20. Առավել թափանցիկ դարձնել բուհական ղեկավարության գործունեությունը: Ուղղահայաց կառավարման կապերը փոխարինել հորիզոնական կապերով՝ դրա համար օգտագործելով էլեկտրոնային ու այլ տեխնիկական հնարավորություններ: Մեծացնել բուհի ղեկավարության ու դասախոսների անմիջական շփման հաճախականությունը՝ գործնականում հաշվի առնելով և կիրառելով ողջախոհ առաջարկությունները:

21. Նպաստել ակադեմիական ազնիվ մշակույթի, այդ թվում՝ մասնագիտական սուլիդարության և վստահության ձևավորմանն ու ամրապնդմանը: Քննարկումների և քննադատության մշակույթը խթանել ամբիոններում, լսարաններում և այլ հարթակներում:

22. Թեթևացնել դասախոսների լսարանային ծանրաբեռնվածությունը՝ ստեղծելով ազատված աշխատաժամանակում դասախոսների հետազոտական ներուժի գործադրման հնարավորություններ: Ներդնել դասախոսի օգնականի ինստիտուտը:

23. Խթանել անհատական և թիմային հետազոտությունների իրականացումը՝ ԵՊՀ ներքին հետազոտական դրամաշնորհների և արտաքին այլ միջոցների ներգրավմամբ:

24. Խրախուսել դասախոսներին՝ համալսարանից դուրս իրենց կատարած հետազոտությունների արդյունքները դասավանդման գործընթացում կիրառելու համար: Խրախուսանքի հատուկ միջոցներ կիրառել՝ ուսումնական գործընթացում գիտական նորույթները ներառող դասախոսների համար:

25. Պարբերաբար թարմացնել գրադարանային ֆոնդը և էլեկտրոնային ռեսուրսները՝ դասախոսների համար դրանցից օգտվելու սեմինարների անցկացմամբ:

26. Ապահովել ամբիոններում դասախոսների առարկայական ծրագրերի քննարկման կայուն և կանխատեսելի կարգ: Իրականացնել առարկայական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ կրկնվող թեմաների բացահայտման նպատակով:

27. Ուսանողների և գործընկերների համար ապահովել առարկայական ծրագրերի հասանելիությունը՝ ԵՊՀ էլեկտրոնային հարթակներում:

28. Ուսանողների համար ստեղծել վիրտուալ հարթակ ԵՊՀ կայքում՝ առարկայական ծրագրերի ու նյութերի (handouts) հասանելիությունն ապահովելու համար:

29. Վերանայել դասախոսների դասակարգման համակարգը՝ այն դարձնելով առավել ճկուն և համարժեք՝ դասախոսների որակավորմանն ու կատարած աշխատանքին: Նվազեցնել ուսանողների թվաքանակի և վարչական աշխատանքի գործոնների նշանակությունը՝ դասախոսներին տարակարգեր շնորհելիս:

30. Խթանել ֆակուլտետների մեթոդաբանական հանձնաժողովների գործունեությունը՝ դրան առավել կայուն, կանոնակարգված և հաշվետու բնույթ հաղորդելով:

31. Զարգացնել դասալսումների և դրանց արդյունքների հիման վրա դասախոսներին խորհրդատվական

աջակցություն ցուցաբերելու պրակտիկան: Ապահովել դասալսման իրականացման կարգի և ժամանակացույցի թափանցիկությունը: Դասալսման ամբողջական, պարտադիր և կանխատեսելի բնույթ ունեցող համակարգ ձևավորել:

- 32.** Դասալսումը դիտարկել ոչ թե որպես դասախոսի նկատմամբ վերահսկողության, այլ՝ աջակցության մեխանիզմ: Զարգացնել հորիզոնական կապերի վրա հիմնված դասալսման պրակտիկան, երբ միևնույն կարգավիճակն ունեցող, միևնույն տարիքային խմբին պատկանող դասախոսները մեկը մյուսին խորհրդատվական աջակցություն են տրամադրում՝ միաժամանակ փորձի փոխանակություն իրականացնելով:
- 33.** Ձևավորել ամբիոններում և ֆակուլտետներում ուսանողական հարցման արդյունքների քննարկման կայուն պրակտիկա: Ապահովել այդ քննարկումների արդյունքում ֆակուլտետի/ամբիոնի ղեկավարության և գործընկերների կողմից փոփոխություններին միտված հանձնարարականների մշակումը:
- 34.** Ապահովել ուսանողական հարցման արդյունքների՝ կրթական գործընթացի վրա ազդեցության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը: Դասախոսական անձնակազմի համար պետք է պարզ լինի, թե այդ արդյունքներն ինչպես և ինչ չափով են հաշվի առնվում՝ աշխատանքային պայմանագրերի կնքման և երկարացման ժամանակ:
- 35.** Ուղիղ և հստակ կապ ձևավորել դասախոսների գնահատման՝ ուսանողական հարցումների արդյունքների և դասախոսների որակավորման բարձրացման գործընթացի միջև:
- 36.** Ընդլայնել միջազգային գիտաժողովներին և գիտական այլ միջոցառումներին դասախոսների գործուղումների հնարավորությունները, հատկապես՝ խորհրդատվական աջակցության և ճանապարհաձախսի փոխհատուցման միջոցով:
- 37.** Դասավանդման նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կիրառման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել:
- 38.** Ապահովել դասախոսների աշխատանքի նորմալ գրասենյակային պայմաններ (տարածք, ինտերնետ)՝ ուսանողների հետ հանդիպումներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

The Open Society Foundations is a private operating and grantmaking foundation, that aims to shape public policy to promote democratic governance, human rights, and economic, legal, and social reform.
For more information visit www.osf.am

Այս զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծության հեղինակը «Հանրային քաղաքականության Ինստիտուտ» հետազոտական կենտրոնն է, որն էլ նյութի բովանդակության միակ պատասխանատուն է: Վերլուծությունն արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար՝ չի ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Այս զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին:

Զեկույցի հրատարակումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N G18911:

Հանրային Քաղաքականության Ինստիտուտ
Public Policy Institute

info@ipp.am | www.ipp.am

093 43 99 44 | 094 88 99 84